Հ. Ս. ՄԵԼԻՔՅԱՆ

ԲՈԼՇԵՎԻԿՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՎԿԱՍՅԱՆ ԲԱՆԱԿԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՈՒՄ (1917 ապրիլ–մայիս)

Անդրկովկասում Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության նախապատրաստման ժամանակաշրջանի կարևոր իրադարձություններից է բանակային առաջին համագումարը։

Մինչև այժմ այդ համագումարը և նրանում բոլշևիկների ծավալած գործունեությունը ուսումնասիրման առանձին առարկա չի հանդիսացել[1]։ Այնինչ համագումարը լիովին արժանի է ամբողջական ուսումնասիրման, եթե մասնավորապես նկատի առնենք այն հանգամանքը, որ միապետության տապալումից հետո երկրամասում ստեղծված բարդ իրադրության, քաղաքական կուսակցությունների փոխհարաբերության, նրանց տեսակետների մեջ այն պարզություն մտցնող առաջին կարևոր իրադարձությունն էր։

Կովկասյան բանակի առաջին համագումարի աշխատանքները տեղի էին ունենում Թիֆլիսում՝ 1917 թ. ապրիլի 23-ից մինչև մայիսի 24-ը ներառյալ[2]։ Դա համընկնում է պատմական այն ժամանակաշրջանին, երբ ցարիզմի տապալումից հետո, երկիշխանության պայմաններում, դեռ շարունակում էր փթթել բուրժուա-դեմոկրատական հեղափոխության «մեղրամիսը», երբ հեղափոխություն կատարած բանվորների ու զինվորների հետ մեկտեղ կարմիր ժապավեններով էր շարունակում զարդարված մնալ նաև բուրժուազիան։ Վ. Ի. Լենինի բնութագրմամբ, դա հեղափոխություն կատարած մասսաների «բարեխղճորեն մոլորվածության», «հեղափոխական պաշտպանողականության» ժամանակաշրջանն էր, երբ բանվորական ու զինվորական սովետներում մեծամասնություն գրաված մանրբուրժուական կուսակցությունները շարունակում էին «աղտոտել» մասսաների գիտակցությունը, կամա թե ակամա նրանց ծառայեցնելով իմպերիալիստական բուրժուազիայի արյունոտ նպատակներին։

Բուրժուազիայի նկատմամբ տածած վստահության համընդհանուր մթնոլորտում փոքրաթիվ, իրենց կազմակերպությունները դեռևս չամրապնդած բոլշևիկների ճշմարտացի խոսքը սթափեցնում էր «ֆրազի հեղափոխականներին» գերի դարձած բանվորների, զինվորների, գյուղացիների հոծ զանգվածներին, «պայծառացնում էր» նրանց գիտակցությունը, օգնում էր նրանց ճիշտ ուղիներ գտնելու իմպերիալիստական պատերազմին վերջ տալու, ագրարային, ազգային և ժա-

---

1 *Համագումարի որոշ փաստաթղթեր հրատարակվել են Ս. Ե. Սեֆի կազմած* «Революция 1917 года в Закавказье» *փաստաթղթերի ժողովածուում (Թբիլիսի, 1927)։ Նրա աշխատանքները մասնակիորեն, խիստ համառոտակի քննարկել են՝ Գ. Բ. Ղարիբջանյանը «Հայաստանի կոմունիստական կազմակերպությունները սովետական իշխանության հաղթանակի համար մղված պայքարում» (Երևան, 1955, էջ 95), Գ. Վ. Խաչապուրիձեն* «Борьба грузинского народа за установление Советской власти» *(Թբիլիսի, 1956, էջ 57—58), Մ. Վ. Ցերցվաձեն* «Революционное движение в Грузии в 1914—1917 годах» *(Թբիլիսի, 1960) աշխատությունների մեջ։*

Խ. Ի. Մուրատովի «Революционное движение в русской армии 1917 г.» *(Մոսկվա, 1958) աշխատության մեջ, ուր ընդհանրապես վերին աստիճանի կցկտուր, պատահական փաստերով են ներկայացված հեղափոխական շարժումները Կովկասյան բանակում, այդ համագումարի մասին ոչ մի խոսք չկա։ Նրա մասին լռում կամ հարևանցիորեն են հիշատակում կովկասյան հեղափոխական շարժումներն ուսումնասիրած մյուս պատմաբանները։*

2 *Տե՛ս Վրացական ՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 21, ց. 2, գ. 10, թ. 95։* «Борьба за победу Советской власти в Грузии» (Тбилиси, 1958) *փաստաթղթերի ժողովածուում (էջ 725) սխալմամբ համագումարի վերջին օրը նշված է մայիսի 22-ը։ Ոմանք նշում են մայիսի 25-ը։ Ներկա հոդվածում ամսաթվերը նշված են հին տոմարով։*

մանակի այլ արմատական հարցերը լուծելու համար։ Այդ ամենը նկատի ունենալով էր, որ Անդրկովկասի բոլշևիկները մեծ նշանակություն էին տալիս համագումարին։ «Կավկազսկի ռաբոչի» լրագիրը «Կովկասյան բանակի երկրային համագումարի առթիվ» իր առաջնորդողում գրում էր, որ «դա քաղաքական և հասարակական մեծ նշանակություն ունեցող փաստ է», որ Համառուսաստանյան սովետների պետրոգրադյան խորհրդակցությունից և արևմտյան ռազմաճակատի՝ Մինսկում տեղի ունեցած բանակային համագումարից հետո հրավիրված Կովկասյան բանակի առաջին համագումարի «նշանակությունը մեծ է ոչ միայն մեր երկրամասի, այլև ամբողջ Ռուսաստանի համար»[3]։ Բոլշևիկները ողջունում էին համագումարը, որպես դեռևս անկազմակերպ հեղափոխական բանակի կազմակերպման «առավել խոշոր քայլերից մեկը»։ Նրանք պարզ տեսնում ու գիտակցում էին, որ «սկզբում հեղափոխության շարժիչ ուժերը պայքարի մեջ են մտնում կամ քիչ կազմակերպված, կամ բոլորովին անկազմակերպ։ Հեղափոխության պրոցեսում նրանք պետք է կազմակերպվեն, այլապես հեղափոխության արդյունքները իսկական մարտիկների ձեռքից կանցնեն տիրապետող դասակարգերի՝ կապիտալիստների և հողատերերի ձեռքը»[4]։

Այսպիսով, բոլշևիկները բանակային համագումարը դիտում էին՝ դեռևս անկազմակերպ հեղափոխական զինվորական մասսաների կազմակերպման, նրանց մանրբուրժուական կուսակցություններից հեռացնելու և բոլշևիկների շուրջը համախմբելու միջոց։ Հեղափոխության խաղաղ զարգացման ժամանակաշրջանում այդպիսի տակտիկան լիովին բխում էր լենինյան Ապրիլյան թեզիսներից և համապատասխանում էր կուսակցության 7-րդ (Ապրիլյան) կոնֆերանսի մշակած գծին։

Համագումարը ներկայացնում էր ռուս-թուրքական ռազմաճակատի և թիկունքի ավելի քան 600 հազարանոց բանակի զորամասերին և հեղափոխական-դեմոկրատական կազմակերպություններին։ Նախապես ենթադրվում էր, որ համագումար կգան 800 պատգամավորներ[5], սակայն համագումարի նկատմամբ բանակային սովետների, կոմիտեների և ընդհանրապես ողջ բանակի ակտիվ հետաքրքրության պայմաններում մասնակցողների թիվը զգալիորեն աճեց[6]։

Նախապատրաստելով համագումարի հրավիրումը Թիֆլիսի զինվորական պատգամավորների սովետը նախագծում էր նրա աշխատանքները սկսել ապրիլի 15-ին, սակայն, ինչպես պարզվեց հետագայում, մի քանի շաբաթ էր պահանջվում, որպեսզի պատգամավորները գրեթե ճանապարհազուրկ ռազմաճակատից հասնեին Թիֆլիս։ Հատկապես ռազմաճակատի այնպիսի հեռավոր շրջանների համար, ինչպիսիք էին Երզնկան ու Մուշը, Բիթլիսն ու Շատախը, Ուրմիո լճի հարավային, արևելյան շրջանները, Համադանն ու Կազվինը։ Այդ ամենը նկատի ունենալով էր, որ Թիֆլիսի զինվորական պատգամավորների սովետի նախագահ, էսեռ Վերեշչակը Կովկասյան բանակի հրամանատարության միջոցով, ապրիլի սկզբներին, բանակին տեղեկացնում էր. «Նկատի ունենալով ռազմաճակատի մի շարք զորամասերից ստացված դիմումները, որ իրենց պատգամավորները չեն կարող համագումար գալ նշանակված ժամկետին, Կովկասյան բանակի համաբանակային համագումարի հրավիրումը ապրիլի 15-ից փոխադրվում է ապրիլի 23-ին»[7]։

Համագումարի նախապատրաստման ժամանակաշրջանում համաձայնողական կուսակցությունները ամեն կերպ աշխատում էին փակել բոլշևիկների ճանապարհը դեպի համագումար։ Դա ցարիզմի տապալումից անմիջապես հետո հեղափոխությունից բոլշևիզմի մեկուսացման նրանց քաղաքականության օղակներից մեկն էր։ Անդրկովկասում այդպիսի քաղաքականության առավել բնորոշ փաստը, համագումարին նախորդող շրջանում, հանդիսացավ բոլշևիկյան «Պրավդա» լրագրի և հեղափոխական-դեմոկրատական այլ օրգանների ու գրականության տարածման արգելումը Կովկասյան ռազմաճակատի զինվորների շրջանում։ Թիֆլիսի համաձայնողական սովետների ապրիլի 19-ին ձեռնարկած այդ քայլը սովետներում փոքրամասնություն կազմող բոլշևիկները որակեցին, իբրև հեղափոխությանը դավաճանելու «հրեշավոր քայլ» և բանվորական ու զինվորական մասսաների աջակցությամբ անարգանքի սյունին գամեցին «հեղափոխական ֆրազիս» առավել վտանգավոր գործիչներին՝ կովկասյան մենշևիզմի խորամանկ և փորձված

3 «Կավկազսկի ռաբոչի», № 32, 22 ապրիլի, 1917։

4 Նույն տեղում

5 Տե՛ս Ս. Ե. Ս և Ֆ, նշված ժողովածուն, էջ 89։

6 Տե՛ս «Борьба за победу Советской власти в Грузии. документы и материалы (1917—1921 гг.)», Թբիլիսի, 1958, էջ 725։ Այդ ժողովածուում նշված «1300» թիվը մեր կարծիքով ոչ թե պատգամավորների, այլ ընդհանրապես մասնակիցների թիվն է։

7 Վրացական ՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 1228, ց. 1, գ. 4170, թ. 37։

պարագլուխ Նոյ Ժորդանիայի գլխավորությամբ։ Թեպետ բոլշևիկներին հաջողվեց վերացնել «Պրավդայի» վրա դրված «սոցիալիստականն» կալանքը և նրա 40 հազար օրինակն ուղարկել ռազմաճակատ, բայց արդեն պարզ էր, որ համաձայնողական կուսակցությունները ամեն ինչ անում են և դեռ կանեն բոլշևիզմը մեկուսացնելու համար։ Դրանով էլ պետք է բացատրել այն, որ բոլշևիկները համագումարում կազմեցին մի փոքրաթիվ խումբ։ Արխիվային նյութերի, մամուլի, գրականության մանրազնին ուսումնասիրությամբ մեզ հաջողվել է դեռևս ոչ լիովին, բայց հիմնականում պարզել համագումարի բոլշևիկ պատգամավորների կազմը, որի թիվը տատանվում էր 20-ի շուրջը։

Իատելով մեր ձեռքի տակ եղած նյութերից, համագումարում առավել եռանդուն գործունեություն են ծավալում Գ. Ն. Կորգանովը, Ի. Վ. Մալիգինը, Ս. Ի. Քավքառաձեն, Ն. Մ. Կուզնեցովը[8], Մ. Ս. Կեդրովը[9], Մ. Ցխակայան, Ֆ. Ե. Մախարաձեն, Ս. Ա. Բոգդանովը[10] և ուրիշներ։ Տրապիզոնի հեղափոխական կայազորն էր ներկայացնում ականավոր բոլշևիկ Հայկ Հովսեփյանը։ Կարսի կայազորից համագումարին մասնակցողների թվում էր բոլշևիկ Ա. Մետելևը։ Թիֆլիսի կայազորն էին ներկայացնում նաև Վ. Պ. Մուշնիկովը, Ա. Գ. Կայդալովը։ Ախալքալակի զինվորների պատգամավորների սովետի և կայազորի կողմից համագումարի պատգամավոր էր ընտրվել Ս. Ռ. Գաղոյանը։ Նա ինքը վկայում է. «համագումարի աշխատանքներին ես մասնակցում էի բոլշևիկների ֆրակցիայի շարքում»[11]։

Շերիֆխանեի սովետի և այդ շրջանի հեղափոխական զորամասերի կողմից Մ. Ս. Կեդրովից բացի համագումարին մասնակցում էին նաև բոլշևիկներ Տարասովը, Տետերնիկովը[12]։

---

8 Կուզնեցով Ն. Մ. *(1885—1937)*, պրոֆեսիոնալ հեղափոխական։ 1905 թ. աշխատել է ՌՍԴԲՊ Մոսկվայի օկրուգային կազմակերպությունում։ 1912 թ. հեղափոխական աշխատանք է տարել Գյանջայի երկաթուղային բանվորների շրջանում։ Փետրվարյան հեղափոխությունից հետո նա եռանդուն աշխատանք է ծավալել Թիֆլիսի զինվորների և բանվորների շրջանում, ընտրվել է Թիֆլիսի բանվորների պատգամավորների սովետի քարտուղար և այնտեղ կազմակերպել բոլշևիկյան ֆրակցիա։ Եռանդուն պայքար է ծավալել սովետի մենշևիկյան պարագլուխների դեմ։ 1917 թ. հոկտեմբերին ընտրվել է ՌՍԴ(բ)Պ Կովկասյան երկրային կոմիտեի կազմում։ Դեկտեմբերին նշանակվել է Կովկասի գործերի արտակարգ կոմիսար Ստ. Շահումյանի քարտուղարը, ընտրվել է բանակային երկրորդ համագումարից հետո ստեղծված ռազմահեղափոխական կոմիտեի կազմում։ 1918 թ. ապրիլից Բաքվի Ժողկոմսովետի քարտուղարն էր։ Զոհվել է անհատի պաշտամունքի շրջանում։

9 Կեդրով Մ. Ս. *(1878—1941)*, բոլշևիկյան կուսակցության ականավոր գործիչ։ Հեղափոխական շարժման մեջ է մտել 1899 թվականից։ Կուսակցության անդամ է 1901 թվականից։ Հեղափոխական ակտիվ աշխատանք է տարել Ն. Նովգորոդի, Յարոսլավլի, Սիմֆերոպոլի, Կոստրոմայի, Պետրոգրադի ս. դ. կազմակերպություններում։ Բազմիցս ձերբակալվել է, եղել է աքսորում, էմիգրացիայում։ Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին նա կովկասյան ռազմաճակատում էր, իբրև բժիշկ-էպիդեմիոլոգ։ Եռանդուն հեղափոխական աշխատանք է տարել ռազմաճակատի զինվորների շրջանում։ Փետրվարյան հեղափոխության օրերին նրա նախաձեռնությամբ և ղեկավարությամբ ստեղծվել է Շերիֆխանեի (Իրան) բանվորների և զինվորների պատգամավորների սովետը, որի նախագահն է ընտրվել ինքը։ Մ. Ս. Կեդրովի գործունեության և մասսաների վրա նրա և մյուս բոլշևիկների ունեցած մեծ հեղինակության շնորհիվ սովետը հեղափոխության առաջին ամիսներին բոլշևիկյան քաղաքականություն էր վարում։

1917 թ. մայիսի կեսերին նա կուսակցության Կենտկոմի կողմից կանչվում է Պետրոգրադ և աշխատանքի նշանակվում կուսակցության Կենտկոմին կից զինվորական կազմակերպությունում (ВОЕНКА), որտեղ և շուտով դառնում է առավել աչքի ընկնող գործիչներից մեկը, գլխավորելով բոլշևիկյան «Սոլդատսկայա պրավդա», «Ռաբոչի ի սոլդատ», «Սոլդատ» թերթերը։

Հետագայում նա կուսակցական և սովետական ակտիվ աշխատանք է տանում։ Զոհվել է անհատի պաշտամունքի շրջանում, 1941 թ.։

10 Բոգդանով Ս. Ա., Փետրվարյան հեղափոխությունից հետո Թիֆլիսի բոլշևիկյան կազմակերպության ակտիվ անդամ։ Եռանդուն աշխատանք է տարել սովետների բոլշևիկյան ֆրակցիաներում, և ընդհանրապես Թիֆլիսի ու Կովկասի զինվորների ու բանվորների շրջանում։ Գնդակահարվել է Բաքվի 26 կոմիսարների թվում։

11 «Հին բոլշևիկների հիշողություններ», գիրք առաջին, Երևան, 1958, էջ 249։

12 Տե՛ս «От Февраля к Октябрю», Մոսկվա, 1957, էջ 171։

Այլ զորամասերից համագումարին մասնակցում էին և ելույթներ ունեցան բոլշևիկներ Սուվորովը, Կոյուչկովը[13]: Թիֆլիսի բոլշևիկների կոմիտեից մասնակցում էին նաև բանվորական պատգամավորների սովետի անդամներ Ն. Ցերցվաձեն[14], Ջուղելին[15] և ուրիշներ։

Համագումարում առավել մեծ թիվ էին կազմում էսեռները և նրանց կողմնակիցները։ Թվով նրանց զիջում էին մենշևիկները։ Այդ երկու գլխավոր ֆրակցիաներին հաջորդում էր «անկուսակցական» կոչված պատգամավորների խումբը, որը ներկայացնում էր մոտ 40 պատգամավորների։ Նրան հետևում էր բոլշևիկների խումբը։ Համագումարին մասնակցում էին նաև դաշնակների, վրաց ֆեդերալիստների, «ուկրաինացիների», կազակության բուրժուա-նացիոնալիստական խմբերը, որոնք մերթ ընդ մերթ հանդես գալով իրրև ինքնուրույն ֆրակցիաներ, համագումարի քննարկած բոլոր արմատական հարցերում հիմնականում պաշտպանում էին էսեռներին ու մենշևիկներին։ Համագումար էին թափանցել նաև կադետական բուրժուազիայի ներկայացուցիչներ, որոնք, սակայն, ընդհանուր հեղափոխական-դեմոկրատական մթնոլորտում կծկվել էին և, չնչին բացառությամբ, չէին համարձակվում հանդես գալ մերկապարանոց կադետական պահանջներով։ Նրանք ջանասիրաբար գովերգում և պաշտպանում էին էսեռա-մենշևիկյան աջ գործիչներին՝ Ժորդանիային, Ջխենկելուն, Գեգեչկորուն, Իամիշվիլուն, Վերեշչակին, Պոպովին, Բերյոզովին, Դոնսկոյին, Լոմտատիձեին, Սմիռնովին, Կարցևաձեին և մյուսներին, որոնք և՛ տակտով, և՛ այն ժամանակի համար ամենամոդայական սոցիալիստական ֆրազներով պաշտպանում էին բուրժուազիայի ներքին և արտաքին քաղաքականությունը։

Համագումարի աջ թևը ներկայացնում էր էսեռա-մենշևիկյան համաձայնողական բլոկը։ Միջին, ցենտրիստական գծում մերթ ընդ մերթ հանդես էր գալիս «անկուսակցական» պատգամավորների խումբը, որը երբեմն աջակցություն էր ստանում համաձայնողական բլոկի ձախ ուժերից։ Այդ խումբը արտացոլում էր բանակի «վերկուսակցական», ապոլիտիկ շերտերին, որոնք չէին հասցրել կողմնորոշվելու բանակում ծավալվող քաղաքական կուսակցական պայքարում, բայց և հենց իրենց «անկուսակցականությամբ» ավելի ցայտուն էին դրսևորում մանրբուրժուական «հեղափոխական պաշտպանողականության» մթնոլորտը։

Օպոզիցիան համագումարում ներկայացնում էր բոլշևիզմը, որին հատկապես համագումարի աշխատանքների վերջում աջակցում, մերթ բացահայտ, մերթ գաղտնի պաշտպանում էին ձախ էսեռները ու մենշևիկ-ինտերնացիոնալիստները։ Սի շարք հարցերում նրանք վայելում էին անկուսակցական ձախ պատգամավորների համակրանքը։

Դասակարգային, կուսակցական ուժերի այսպիսի տեղաբաշխումից դժվար չէ կռահել, որ բոլշևիկների համար համագումարում ստեղծվել էր չափազանց անբարենպաստ, ծանր դրություն, որը և ինքնին թելադրում էր նրանց «խիզախ և մտածված գործունեությունը» ողջ համագումարի ընթացքում։

Համաձայնողական բլոկի կամքով համագումարում իբրև «պատվավոր» նյուրեր ներկա էին Կովկասյան բանակի հրամանատար, Գուչկովի դրածո Յուդենիչը, շտաբի և հրամանատարության այլ ներկայացուցիչներ, ինչպես նաև նրա աշխատանքների որոշ շրջանում «դաշնակից» անգլիական բանակի ներկայացուցիչը։ Հեղափոխական բանակի ռադիկալ ուժերին ծաղրելու հետ մեկտեղ էսեռա-մենշևիկյան լիդերների այդ քայլը բոլշևիկներին և հեղափոխության այլ «խելահեղ» տարրերին ահաբեկելու առավել ցայտուն և անզուսպ դեմոնստրացիա էր նշանակում։ Համագումարի նիստերին մասնակցելու հրավիրվեցին նաև Անդրկովկասյան Հատուկ կոմիտեի (ՕԶԱԿՕՄ) ներկայացուցիչները, իբրև վկա այն բանի, որ մանրբուրժուական կուսակցությունները հավատարիմ կդտնվեն բուրժուական ժամանակավոր կառավարությանը և կգործակցեն նրա հետ ընդդեմ բարձրացող բոլշևիզմի։

Համագումար գալով, բոլշևիկները լավ գիտեին, որ այն կարտացոլի հեղափոխական մասսաների «բարեխղճորեն մոլորվածությունը», ողջ երկրում ու բազմազգ Անդրկովկասում ստեղծված հասարակական ուժերի փոխհարաբերակցությունը, և որ այդպիսի ճահճային, գաղճ քաղաքական մթնոլորտում իրենց գլխավոր խնդիրը կլինի համագումարի պատգամավորներին և

---

13 Տե՛ս Ս. Ե. Ա և Ֆ, նշված ժողովածուն, էջ 102։

14 Տե՛ս М. В. Церцвадзе. Революционное движение в Грузии в 1914—1917 годах, էջ 195։

15 Ջուղելին Թիֆլիսի ս.-դ. կազմակերպության բոլշևիկյան ֆրակցիայում էր գործում մինչև 1917 թ. հուլիսը։ Հետագայում նա անցնում է մենշևիկների կողմը, կանգնում վրացական ազգային զորամասերի գլուխ, իսկ 1918 թ. գլխավորում է գյուղացիական հեղափոխական ելույթների ճնշումը Վրաստանում։ Տե՛ս Ս. Ե. Ա և Ֆ, նշված ժողովածուն, էջ 93։

նրանց միջոցով ողջ Կովկասյան բանակին ներկայացնել բոլշևիկյան կուսակցության ծրագիրն ու տակտիկական սկզբունքները։ Այսպիսով, զինվորական մասսաների աչքում համաձայնողական բլոկի մերկացմանը զուգընթաց բոլշևիզմի հետևողական և խելացի պրոպագանդա, այս էր լինելու բոլշևիկյան օպոզիցիայի գործունեության բովանդակությունը բանակային առաջին համագումարում։

Դժվարին իրադրության մեջ բոլշևիկները պատվով իրագործեցին իրենց առաջ դրված այդ խնդիրը։ «Կավկազսկի ռաբոչի» թերթը հետագայում, Կովկասյան բանակի երկրորդ համագումարի նախօրյակին, 1917 թ. դեկտեմբերին, բնութագրելով բոլշևիկների գործունեությունը բանակային առաջին համագումարում, գրում էր. «Այն ժամանակ փոքրիկ խումբը խիզախորեն մարտնչում էր պաշտպանողականների (էսեռների և մենշևիկների) բուրժուա-համաձայնողական քաղաքականության դեմ, նրանց դեմ, ովքեր հեշտությամբ հրապուրեցին զինվորներին, որոնք դեռ չէին հասցրել պարզելու իրենց քաղաքական, իրենց գյուղացիական-բանվորական, իրենց դասակարգային գիտակցությունը, որոնք դեռ հրապուրվում էին պաշտպանողականների թակարդով»[16]։

Այժմ քննարկենք այն հարցը, թե որո՞նք էին համագումարի մտահոգության առարկա հանդիսացող հիմնական հարցերը և ինչպի՞սին էր բոլշևիկների վարքագիծը այդ հարցերից մի քանիսի քննարկման ժամանակ։

Համագումարի ընթացքում, պլենար կամ սեկցիոն նիստերում քննարկվեցին. 1) ընթացիկ մոմենտի և տակտիկայի, 2) պատերազմի և խաղաղության, 3) Ժամանակավոր կառավարության նկատմամբ ունենալիք վերաբերմունքի, 4) ագրարային, 5) բանվորական, 6) ազգային, 7) «ապատության փոխառության» նկատմամբ վերաբերմունքի, 8) զինվորական և բանվորական սովետների փոխհարաբերության, 9) զինվորական կարգապահության, 10) բանակի պարենային մատակարարման, 11) տրանսպորտի, 12) բժշկա-սանիտարական գրության, 13) բանակային «պրոֆեսիոնալ կազմակերպությունների» և մի շարք այլ հարցեր։ Այլ կերպ ասած բոլոր այն ֆենսական հարցերը, որոնց լուծումը կամ պարզաբանումը ծայր աստիճան հուզում էր թիկունքի և բանակի հեղափոխական մասսաներին։

Համագումարի բացման ժամանակ արտասանած իր ճառում Թիֆլիսի զինվորական պատգամավորների սովետի նախագահ էսեռ Վերեշչակը նշում էր. «Խոսելով պատերազմի մասին և խոսելով Ժամանակավոր կառավարության նկատմամբ վերաբերմունքի մասին, պետք է իմանալ, որ դա այն խնդիրն է, որը կլինի մեր համագումարի անկյունաքարը»[17]։ Առանց հապաղելու, արտահայտելով համագումարի համաձայնողական բլոկի կամքը, այդ հարցերի պրակտիկ լուծման տեսանկյունից, նա բացեիբաց հայտարարում էր. «մեր առաջ կանգնած է երկու գլխավոր հարց, որոնք պետք է ընկնեն մեր աշխատանքի հիմքում. դա աշխատանքն է ռազմաճակատի համար, բանակի կազմակերպումը՝ արտաքին թշնամուն հաղթելու համար, և թիկունքի (կազմակերպումը—Հ. Մ.), որպեսզի թույլ չտրվի գլուխ բարձրացնելու ներքին թշնամուն»[18]։ Ավելորդ չէ նկատել, որ «ներքին թշնամի» հասկացությունը ցարիզմի տապալումից մոտ երկու ամիս հետո էսեռա-մենշևիկյան գործիչները օգտագործում էին՝ առերես հիշելով միապետական ուժերին, բայց իրականում նրանք հասկացնել էին տալիս, գլխով էին անում դեպի բոլշևիզմը, որը հատկապես լենինյան Ապրիլյան թեզիսներից և Ժամանակավոր կառավարության ապրիլյան Հգնաժամից հետո այնպես անողոքաբար սկսել էր քննադատել Ժամանակավոր կառավարության ներքին և արտաքին քաղաքականությունը։

Նույն ոգով էր համագումարին դիմում նրա գործնական նախագահը՝ բոլշևիզմի երդվյալ թշնամիներից մեկը՝ Ե. Գեգեչկորին, որի ճառը ամբոխավորության, փարիսեցիության այդ ավարտուն նմուշը, պերճորեն զարդարված էր «հեղափոխական ֆրազով», ժամանակի մանրբուրժուական սոցիալիզմի ողջ բարեմասնություններով։ Պատմական զարգացման այս էտապի համար բնավ էլ զարմանալի չէ այն, որ պատգամավորների ճնշող մեծամասնությունը, հատկապես համագումարի սկզբում, սվացիա էր սարքում «ֆրազի հեղափոխականներին», հեշտությամբ գերի էր դառնում նրանց։ Հեղափոխական գյուղացիական բանակը մեծ հույս էր կապում ցարիզմի տապալմամբ չրի երես դուրս եկած «սոցիալիստական» էսեռա-մենշևիկյան կուսակ-

16 «Կավկազսկի ռաբոչի», № 220, 14 դեկտեմբերի, 1917։
17 Ս. Ե. Սեֆ, նշված ժողովածուն, էջ 95։
18 Նույն տեղում, էջ 94։

ցությունների հետ, համոզված էր, որ հեղափոխության այդ փրփուրը, ամենից բարձր բղավող այդ կերենսկիներն ու չխեիձները, ժորդանիաներն ու գեգեչկորիները շուտով կլուծեն իրենց հուզող արմատական հարցերը։ Բանակը ամբողջությամբ վերցրած դեռևս չէր հասունացել զգալու, որ «սոցիալիզմիս» այդ ճարպիկ լարախաղացները վարպետորեն խաղում են իրենց՝ զինվորների հայրենասիրական զգացմունքների հետ, որ նրանք անընդհատ վկայակոչում են մարտիկի ռազմական արժանապատվությունը և շարունակում են հեղափոխական բանակը քարշ տալ իմպերիալիզմին ձեռնտու ուղիներով։ Խաղաղության, հացի, հավասարության կարոտ աշխատանքի հասարակ մարդու, տիրապետող դասակարգերի կամքով գորշ շինելի մեջ խցկված դասակարգային ամուր գիտակցությունից զուրկ զինվորի համար հեղափոխական ֆրազն էլ մեծ բան էր թվում։ Նա մեծահոգաբար բավարարվում էր խոստումներով, քչով։ Ուշագրավ է համագումարի մասնակից Ս. Գալոյանի այն վկայությունը, թե «այն ժամանակ տարօրինակ էր տեսնել, որ շարքային զինվորներից շատերը տեղ էին գրավում նախագահությունում, իսկ բարձրաստիճան սպաները՝ դահլիճում, և նրանց կողքին նստած շատ և շատ զինվորներ, որոնք օժտված էին սպաներին հավասար իրավունքներով»[19]։ Հեղափոխության այդ առաջին պտուղները գայթակղեցնում, մոլորեցնում էին նորմալ, մարդկային կյանքի ծարավի զինվորին, մի բան, որը և նշանակալից բազա էր հանդիսանում նրա «բարեխղճորեն մոլորվածության» համար։

Ապրիլի 25-ին համագումարի բացումից երկու օր հետո, օրակարգի առաջին հարցի «ընթացիկ մոմենտի և տակտիկայի մասին» զեկուցմամբ հանդես եկավ աջ մենշևիկ Դ. Պոպովը, որը բուրժուազիային միանգամայն նպաստավոր դիրքերից մեկնաբանեց ընթացիկ մոմենտի, հեղափոխության շարժիչ ուժերի հարցը։ Նա ներքին հարգանքով էր խոսում բուրժուազիայի մասին, որը իբր թե «հին ռեժիմի ժամանակ ճնշված էր», որ այդ բուրժուազիան էլ, նախքան հեղափոխությունը, «նախապատրաստեց բնակչության մտքերը» և իբրև այդ ամենի տրամաբանական արդյունք՝ «երբ բռնկվեց հեղափոխությունը, բուրժուազիան, ի դեմս ժամանակավոր կառավարության, կանգնեց իշխանության գլուխ»[20]։ Փաստորեն ստացվում էր, որ բուրժուազիան ոչ միայն հեղափոխության շարժիչ ուժ էր եղել, այլև գաղափարապես նախապատրաստել էր հեղափոխության մնացած շարժիչ ուժերին՝ բանվորներին, զինվորներին, գյուղացիներին, որոնց նկատմամբ էլ նա ապահովեց իր հեգեմոնիան, հանձին բուրժուակալվածատիրական կառավարության։ Նրա զեկուցման լեյտմոտիվը «հեղափոխական ուժերի միասնության» հաստատումն էր, միասնություն, որը բուրժուազիայի ու նրա ծառայակամ գործակալների ամենից ավելի մոդայական լոզունգն էր։

Զարգացնելով աշխատավորների դասակարգային գիտակցությունը բթացնող նման քաղաքականությունը, համաձայնողական կուսակցությունները եռանդուն կերպով պրոպագանդում էին այն տեսակետը, որ ցարիզմի տապալումից հետո ժամանակը չէ մտածելու հեղափոխության հաջորդ՝ սոցիալիստական էտապի մասին։ Ջայնակցելով մենշևիկ զեկուցողին, կովկասյան էսեռականության աչքի ընկնող դեմքերից մեկը՝ Բերյոզովը իր ելույթում նշում էր. «անհրաժեշտ է հիշել, որ մեր ժամանակը դեռ չի եկել, մեզ դեռ հարկ կլինի հաշտվել հին սոցիալական կարգի հետ։ Չի կարելի այժմ ցրել մեր ուժերը։ Չի կարելի մեր պահանջները անցկացնել հայտարարման կարգով։ Մենք միասին պետք է գնանք սահմանադիր ժողով։ Եթե բուրժուազիան միայնակ գնա, նա մեզ չի տա այնպիսի սահմանադիր ժողով, որը մեզ պետք է»[21]։ Նույն բլոկից մի այլ պատգամավոր, Գուսևը, համոզված պնդում էր, որ Ռուսաստանում «սոցիալիզմի իրագործման պայմաններ չկան», և նա այդ ասում էր սոսկ այն բանի համար, որպեսզի, առանց քաշվելու իր «սոցիալիստական» կոչումից, հայտարարի, թե «թող այժմ իշխանության ղեկի մոտ կանգնի բուրժուազիան»[22]։ Բուրժուազիայի «հեղափոխական դերի» վերաբերյալ Պոպովի թեզիսների հիմնավորման ճիգեր էր թափում մի այլ աչքի ընկնող մենշևիկ գործիչ՝ Սմիռնովը։ Դիմելով պատմական անալոգիայի մեթոդին՝ նա նշում էր, որ «պատմությունը հաճախ կրկնվում է..., որ բուրժուազիան հաճախ հեղափոխական է լինում և այդ իսկ պատճառով նրան հակահեղափոխական անունով կնքելը կլիներ շատ սխալ»։ Նա զարգացնում էր պրոլետարիատի «ինքնասահմանափակման» տեսակետը, սոցիալիստական հեղափոխությունից հրաժարվելու տեսակետը և պահանջում, որպեսզի պրոլետարիատը հրաժարվի իր դասակարգային պահանջներից

---

19 «Հին բոլշևիկների հիշողություններ», առաջին գիրք, էջ 249։

20 Ս. Ե. Ս ե ֆ, նշված ժողովածուն, էջ 100։

21 Նույն տեղում, էջ 103։

22 Նույն տեղում, էջ 105։

չխանգարի բուրժուազիային «իրագործելու դեմոկրատական ռեսպուբլիկա»23, Բանվորներին ու զինվորներին զգուշացնելով սոցիալիստական հեղափոխության գաղափարով տարվելուց, մանրբուրժուական սոցիալիստները չէին խորշում բացահայտ սոփեստությունից։ Նրանք աշխատավորների մեջ վախ էին ներշնչում 1871 թ. Փարիզի հերոսական կոմունայի օրինակի կրկնությունից, գովերգում էին ֆրանսիական բուրժուական հեղափոխությունը, այն հակադրելով Կոմունային և ընդհանրապես սոցիալիստական հեղափոխության գաղափարին։ Պատմական դարաշրջանների շփոթման, հասարակական զարգացման մեջ պրոլետարիատի նոր, վճռական դերի անտեսման տեսակետից վերին աստիճանի ուշագրավ էր մենշևիկ Լոմտատիձեի ելույթը։ «Եվ ահա,— ասում էր նա,— ես ցանկանում եմ ձեր ուշադրությունը հրավիրել երկու տարեթվերի՝ 89-ի և 71-ի վրա։ Առաջին տարեթիվը մեզ հիշեցնում է հերոսական բուրժուազիայի ոսկե ժամանակների մասին, երբ նա վերցրեց դրոշը և համարձակ ձեռքերով բարձրացրեց Բաստիլի փլատակների վրա... Ի՞նչ կատարվեց 71 թ.։ Այն ժամանակ մտածեցին, որ կարելի է հայտարարել պրոլետարիատի դիկտատուրա, և երկրում հորդեց արյան հեղեղը։ Դա հենց կատարվեց ուժերը հաշվի չառնելուց, և մենք չպետք է կրկնենք սխալները...»24։

Ամեն ինչ ասված է պարզ և որոշակի։

«Պրոգրեսիվ» բուրժուազիայի «հեղափոխական» դերի վերաբերյալ համաձայնողական բլոկի պլատֆորմին վճռականորեն դեմ կանգնեցին բոլշևիկները, որոնք հաղթանակած հեղափոխության շարժիչ ուժերի վերաբերյալ ունեին միանգամայն այլ տեսակետ։ Բոլշևիկներ Կորգանովը, Մալիգինը, Քավքառաձեն, Հովսեփյանը, Սուվորովը, Կրյուչկովը, Ն. Ցերցվաձեն և ուրիշներ, իրենց ելույթներում, մինչ այդ ծավալված իրադարձությունների տրամաբանությամբ, մերժում էին բուրժուազիայի հեղափոխականության վերաբերյալ մանրբուրժուական մտայնությունը։ Չնայած բոլշևիկ հռետորների ելույթները համագումարի արձանագրություններում հիշատակված են ծայր աստիճանի կրճատ, «մսից ու արյունից» գրեթե զրկված վիճակում, սակայն նրանց հիմնական հարցադրումներից, համաձայնողական բլոկի հռետորների առարկություններից և հատկապես «Կավկազսկի ռաբոչի»-ում համագումարի վերաբերյալ եղած ինֆորմացիաներից երևում է նրանց հարցադրումների բովանդակությունը, որը բխում էր հասարակական զարգացման օբյեկտիվ օրինաչափությունների գիտական հաշվառումից և դասակարգային ուժերի ճիշտ տեղաբաշխումից։ Կովկասյան բոլշևիկների համար հսկայական նշանակություն ուներ այն փաստը, որ «Կավկազսկի ռաբոչի»-ում մինչև համագումարի հրավիրումը և համագումարի առաջին օրերին հրապարակվել էին Վ. Ի. Լենինի այնպիսի նշանավոր հոդվածներ, ինչպիսիք էին «Երկիշխանության մասին» (№ 32, ապրիլի 22-ին), «Պրոլետարիատի խնդիրների մասին տվյալ հեղափոխությունում» («Ապրիլյան թեզիսներ», № 34, ապրիլի 25-ին), «Լուիբլանովշչինա» (№ 38, ապրիլի 29-ին), որոնց մեջ պարզաբանված էին հեղափոխության շարժիչ ուժերի, տվյալ էտապի առանձնահատկությունների և հեղափոխության խաղաղ զարգացման ժամանակաշրջանում բոլշևիկների կուսակցության տակտիկայի ու ստրատեգիայի հիմնական սկզբունքները։ Այդ ամենին ավելանում էր նաև այն, որ համագումարի հիմնական հարցերի, այդ թվում և պատերազմի հարցի քննարկումից հետո, մայիսի 8-ին, Պետրոգրադից Թիֆլիս վերադարձավ կուսակցության 7-րդ (Ապրիլյան) կոնֆերանսի պատգամավոր Ֆ. Մախարաձեն, որը Մ. Ցխակայայի հետ միասին երկրամասի բոլշևիկներին տեղյակ պահեց կոնֆերանսի աշխատանքներին, նրանում ընդունված լենինյան բանաձևերին։ Հեղափոխության շարժիչ ուժերի հարցը Կովկասի բոլշևիկները լենինյան դիրքերից էին լուծում նաև Փետրվարյան հեղափոխությունից անմիջապես հետո։ Դեռևս Անդրկովկասի բանվորական պատգամավորների սովետների մարտյան համագումարում վճռականորեն դատապարտելով Ն. Ժորդանիայի վարքագիծը բուրժուազիային հեղափոխության շարժիչ ուժ համարելու վերաբերյալ, Ստ. Շահումյանը հիմնավորում ու պրոպագանդում էր բոլշևիկյան տեսակետը այդ հարցում։ Մի փոքր ավելի ուշ, ապրիլի 10-ին Շահումյանը ՌՍԴ(բ)Կ Բաքվի կազմակերպության միջռայոնական կոնֆերանսում, հակառակ մենշևիկների, «Ընթացիկ մոմենտի մասին» իր առաջարկած բանաձևում գրում էր. «Ռուսական բուրժուազիան, որը մինչև ռևոլյուցիայի պայթյունը բացեիբաց կոնտրռևոլյուցիոն էր, օբյեկտիվորեն նույնքան կոնտրռևոլյուցիոն է մնում ներկայումս»25։ Ապրիլի 8-ի համարում «Կավկազսկի ռաբոչին» «Կադետները հեղափոխականների դերում» հոդվածում մերկացնում էր լիբերալ բուրժուազիայի «հեղա-

23 Նույն տեղում, էջ 107։
24 Նույն տեղում, էջ 108։
25 Ստ. Շ ա հ ո ւ մ յ ա ն, Երկեր, հատ. 2. Երևան, 1957, էջ 413։

փոխական» խաղերը և բացահայտում նրանց ետևում թաքնված դասակարգային նպատակների բովանդակությունը։

Բոլշևիկ պատգամավորները, հերքելով մինչև Փետրվարյան հեղափոխությունը երկրում ձևավորված բուրժուական, այսպես կոչված «պրոգրեսիվ բլոկի» հեղափոխական գերի վերաբերյալ խոսակցությունները, նշում էին, որ Ռոձյանկո—Դուչկով—Միլյուկով բլոկի նրազանքն էր միապետության «բարեհորոգումը» և ոչ թե նրա տապալումը։ Բայց երբ հեղափոխությունը պոռթկաց բուրժուազիային ոչ ցանկալի մասշտաբներով, երբ բանվորներն ու զինվորներն իրենց հզոր շարժմամբ ավելցին-սրբեցին միապետությունը, քքքիջով մերժելով Միխայիլին ցար կարգելու վերաբերյալ բուրժուական զառանցանքը, «պրոգրեսիվ բուրժուազիան», որը կիրթ էր, խորամանկ, փորձված, իսկույն կերպարանափոխվեց, հեղափոխության կարմիր ժապավեններով զարդարվեց, «մոռացավ» աշխատավորներին խեղդելու իր երեկվա վարքագիծը և հեղափոխական մասսաներին զսպելու համար նրանց հրամցրեց մարտյան իր հայտնի «հեղափոխական» ծրագիրը։ Բոլշևիկները զինվորներին ասում էին, որ իրենք, անցյալի դառը փորձից են ճանաչում ժամանակավոր կառավարության մեջ խցկված բուրժուա-կալվածատիրական գործիչներին, որ նրանց հավատալ չի կարելի։

Բոլշևիկները համագումարի ձախ ուժերի հետ մեկտեղ վճռական պայքար ծավալեցին Դ. Պոպովի զեկուցման այն հարցադրման դեմ, որ բանակում կուսակցական կազմակերպությունների ստեղծման անհրաժեշտությունը չկա, որ «դա մեր ազատության գերեզմանն է»[26]։ Բոլշևիկներն ու նրանց հարող ձախ էսեռները, ինչպես նաև մենշևիկ ինտերնացիոնալիստները վճռականորեն առարկում էին բանակում հեղափոխական ագիտացիան արգելելու այդպիսի հարցադրմանը։ Կովկասյան բոլշևիկների լենինյան այդպիսի դիրքորոշումը 1917 թ. ապրիլին պաշտպանում էր Ստ. Շահումյանը, որը գրում էր. «Մենք պետք է ուժեղ ագիտացիա մղենք բանակում զինվորներին պարզաբանելու սոցիալիստական այն մեծ խնդիրները, որ ծառացած են բանվոր դասակարգի առջև Ռուսաստանում, և հնարավորություն չտալ բուրժուազիային բանակը դարձնելու բուրժուական կոնտրռևոլյուցիայի գործիք»[27]։ «Կավկազսկի ռաբոչիյ»-ն արտացոլելով համագումարում ծավալված պայքարը այդ հարցում և քննադատելով համաձայնողական բլոկի տեսակետը գրում էր, որ բանակում կուսակցական կազմակերպությունները արգելել, «նշանակում է թուլացնել հեղափոխության ուժերը և ավելացնել կոնտրռևոլյուցիայի ուժերը»[28]։ Համագումարում ուշագրավ էր ձախ էսեռ Տրոխինի ելույթը։ Նշելով, որ բանակը պետք է դառնա սոցիալիստական բանակ, նա վկայակոչում էր այն կարևոր փաստը, որ «Կովկասյան բանակի աջ թևում (նկատի ունի Էրզերում-Տրապիզոնի շրջանը—Հ. Մ.) ստեղծվել են երկու կազմակերպություն՝ ս.-դ. և ս.-ռ.», և զարգացնում էր այն ճիշտ տեսակետը, որ «եթե հեղափոխական պրոպագանդան հնարավոր է գործարաններում, ապա ինչո՞ւ այն չի կարելի մղել և բանակում»։ Նա պահանջում էր բանակը չկտրել իրեն ծնած հեղափոխական ժողովրդից, ռազմաճակատը չկտրել թիկունքից[29]։

Համագումարում պաշտպանելով ճիշտ տեսակետ, կովկասյան բոլշևիկները նրանից հետո, անհասկանալի է թե ինչու, ամբողջ թափով ձեռնամուխ չեղան բանակում բոլշևիկյան կուսակցական կազմակերպությունների ստեղծմանը։ Թերես կադրերի պակասի հետ մեկտեղ դրան լրջորեն խանգարեց մենշևիկների հետ մինչև հուլիս ամիսը մեկ միասնական կազմակերպությունում նրանց ձևականորեն գտնվելը, այն, որ նրանք աշխատեցին հավատարիմ մնալ կուսակցական կարգապահությանը, կամ գուցե այն վախը, որ կուսակցական կազմակերպությունների ազատությունից կօգտվեն բուրժուա-նացիոնալիստական ուժերը և բանակում կստեղծվեն նացիոնալիստական կազմակերպություններ։ Ի դեպ, այդպիսի կազմակերպություններ արդեն ստեղծվում էին, առանց հաշվի առնելու բանակային համագումարի կարծիքը։ Ինչևիցե, թե՛ մեկը և թե՛ մյուսը չէին արդարանում։ Այդ հարցում բոլշևիկների պակաս վճռականությունը հետհամագումարյան շրջանում, անկասկած, մեծ վնաս հասցրեց Կովկասյան բանակում բոլշևիկյան աշխատանքների ցանկալի զորեղացմանը։

Ընթացիկ մոմենտի և հեղափոխության շարժիչ ուժերի հարցի հետ սերտորեն առնչվում էր բանակային համագումարի մյուս՝ ժամանակավոր կառավարության նկատմամբ ունենալիք վերաբերմունքի հարցը։

---

26 Ս. Ն. Ս ե ֆ, նշված ժողովածուն, էջ 101։

27 Ստ. Շ ա հ ո ւ մ յ ա ն, երկեր, հատ. 2, էջ 414։

28 «Կավկազսկի ռաբոչիյ», № 37, 28 մայիսի, 1917։

29 Տե՛ս Ս. Ն. Ս ե ֆ, նշված ժողովածուն, էջ 104—105։

Մերժելով հեղափոխության մեջ բուրժուազիայի շարժիչ ուժ լինելու վերաբերյալ էսեռա-մենշևիկյան դրույթը, բոլշևիկները ըստ էության մերժում էին նաև ժամանակավոր կառավարությանը ընդհանրապես աջակցելու նրանց տեսակետը։ Ինչպես ճիշտ նկատել էր Վերնշչակը, այդ հարցը իրոք դարձավ համագումարի աշխատանքների անկյունաքարը։ Համաձայնողական բլոկը և մասնավորապես այդ հարցի մասին զեկուցող մենշևիկ Լոմտատիձեն փարիսեցիորեն փորձում էին համագումարի պատգամավորների վրին փութաթիլ այն տեսակետը, որ իբր թե հեղափոխական դեմոկրատիայի և ժամանակավոր կառավարության միջև հնարավոր կոնֆլիկտի հիմք չկա, որ իբր թե «դեմոկրատիայի ճնշմամբ» իմպերիալիստական բուրժուա-կալվածատիրական այդ կառավարությունը կյանքի կկոչի հեղափոխության առաջադրած խնդիրները։ Բուրժուազիային վստահելու և աջակցելու այդպիսի վարքագծի դեմ հիշյալ հարցի քննարկման ժամանակ առաջինը հանդես եկավ Ի. Վ. Մալիգինը, որը մերժելով բուրժուազիայի ու նրա կառավարության հեղափոխականության վերաբերյալ մանրբուրժուական մտայնությունը, համագումարին կոչ արեց ստեղծելու այնպիսի իշխանություն, որը հեղափոխության իսկական շարժիչ ուժերի՝ «պրոլետարիատի և գյուղացիության կողմից է առաջադրված»30, այլ կերպ ասած՝ Մալիգինը գնում էր իշխանությունը անբաժան կերպով էսեռա-մենշևիկյան սովետներին հանձնելու պահանջը, մի բան, որը համընկնում էր լենինյան դիրքորոշմանը։ Համագումարում փայլուն կերպով պաշտպանելով բոլշևիզմն ու նրա առաջնորդ Լենինին, Մալիգինը պարզում էր բուրժուազիայի, նրա գործիչների ու բոլշևիզմի ողջ դասակարգային հակամարտությունը։ «Բուրժուազիան սարսափում է,—ասում էր նա,—երբ մեն միայնակ դուրս է գալիս Լենինն ու ասում իր խիզախ, վճռական խոսքը»31։ Պաշտպանելով հեղափոխության զարգացման, իշխանությունը պրոլետարիատի կողմից վերցնելու լենինյան տակտիկական դրույթները, Մալիգինը հայտարարում էր, որ «մենք այժմ չենք գրավի իշխանությունը, մենք կազմակերպվում ենք, բայց կգա մոմենտը, երբ հեղափոխությունը ամբողջ սրությամբ կդնի իշխանության հարցը»32։ Դա միաժամանակ և պատասխան էր բոլշևիկյան կուսակցությունում եղած այն փոքրաթիվ «ձախ» տարրերին, որոնք գնում էին ժամանակից շուտ իշխանությունը գրավելու, զինված ապստամբությամբ ժամանակավոր կառավարությունը տապալելու, պրոլետարիատի դիկտատուրա ստեղծելու պահանջը։

Ժամանակավոր կառավարությանը չաջակցելու և իշխանությունը սովետներին հանձնելու լենինյան պահանջը իր ելույթում դնում էր նաև Դ. Ն. Կորդանովը։ Նա նշում էր, որ բուրժուազիան հեղափոխական բանվորներից ու զինվորներից ունեցած վախից է, որ դեռ շարունակում է ամբոխավարություն անել, դեմ գնալ իր իսկական էությանը։ Կառավարությունը չի հենվում հեղափոխական ժողովրդի վրա։ Նրա դասակարգային շահերը չեն կարող թույլ տալ, որպեսզի նա խոստումներից բացի որևէ ուրիշ բան տա ժողովրդին։ Բոլշևիկ հռետորը նշում էր, որ բուրժուազիան «գիտի, որ զինվորական և բանվորական պատգամավորների սովետները դա այն իշխանությունն է, որը ընտրել է ժողովուրդը, և որը շուտով ամբողջ իշխանությունը կվերցնի իր ձեռքը... Իշխանության գլուխ կարող են լինել միայն պրոլետարիատը և հեղափոխական գյուղացիությունը»33։ Կորդանովը դիմում էր համագումարի պատգամավորներին և հանձին նրանց ողջ Կովկասյան բանակին, անհապաղ դնելու իշխանությունը սովետներին անցնելու պահանջը։ Դրանով փաստորեն պահանջվում էր նաև ճնշում գործադրել էսեռա-մենշևիկյան կուսակցությունների վրա, որոնք չէին համարձակվում իշխանությունը վերցնել սովետների ձեռքը, վճռականորեն խզել կապերը ժամանակավոր կառավարությունից։

Հաջորդ բոլշևիկ հռետորը Ա. Ի. Քավքաոաձեն էր, «Կավկազսկի ռաբոչի»-ի խմբագիրը, որը քննադատելով բուրժուազիային ու նրա հետ համաձայնություն կնքած էսեռա-մենշևիկյան բլոկի հռետորներին, վճռականորեն պաշտպանում էր հեղափոխության սոցիալիստական զարգացման լենինյան վարքագիծը։ «Դեմոկրատիան,—նշում էր նա,—պետք է պայքարի ելնի ընդդեմ բուրժուազիայի»34։

Փետրվարյան հեղափոխությունից հետո երկրում ստեղծված չափազանց բարդ քաղաքական իրադրության մեջ արագ կողմնորոշվելը այնքան էլ հեշտ չէր։ Դրանով էլ հենց պետք է բացատրել այն, որ կովկասյան, այդ թվում և բանակային բոլշևիկների շրջանում ևս մի շարք

30 Ա. Ի. Ա ե ֆ, նշված ժողովածուն, էջ 102։
31 Վրացական ՍՍՌ ՀՌԿՊԱ, ֆ. 2, գ. 3, թ. 40։
32 Նույն տեղում, թ. 43։
38 Վրացական ՍՍՌ ՀՌ և ՍՇԿՊԱ, ֆ. 1, գ. 25, թ. 73—74։
34 Վրացական ՍՍՌ ՀՌԿՊԱ, ֆ. 2, գ. 3, թ. 47։

հարցերում ի հայտ էին գալիս տակտիկական տարբեր երանգներ, տարբեր մոտեցումներ։ Այսպես, օրինակ, համագումարում բոլշևիկ Կրյուչկովը պահանջում էր «զգոն վերահսկողություն բուրժուազիայի դրածո ժամանակավոր կառավարության նկատմամբ»[35], որը չնայած բուրժուազիայի նկատմամբ քննադատական սուր մոտեցմանը, չէր համընկնում լենինյան Ապրիլյան թեզիսներին։

Համագումարում բուրժուազիայի ու նրա կառավարության նկատմամբ կրքոտ և պարզորոշ հարցադրումները իզուր չանցան։ Այդպիսի մոտեցումը տարերայնորեն, իրենց հոգու խորքում փայփայում էին «բարեխղճորեն մոլորված» շարքային բազմաթիվ, ոչ բոլշևիկ պատգամավորներ։ Այն ցայտուն կերպով արտացոլված է Կովկասյան բանակի զինվորների նամակներում, ուր դասակարգայնորեն դեռևս ոչ լիովին կոփված զինվորը այնպես անողոքաբար մերկացնում էր «հաստափոր բուրժուազիային»։

Համագումարում ստեղծված մթնոլորտում համաձայնողական բլոկի համար հեշտ չէր անցկացնել աջ ուժերին ցանկալի բանաձև ընթացիկ մոմենտի և տակտիկայի վերաբերյալ։ Ընդունված բանաձևը չնայած ուներ հեղափոխության տվյալ էտապին բնորոշ բովանդակություն, սակայն այն, ինչ որ չափով արտացոլում էր նաև բանակի ընդհանուր անվստահությունը բուրժուազիայի նկատմամբ։

Համագումարում ժամանակավոր կառավարության նկատմամբ բոլշևիկյան անվստահության փայլուն դրսևորումը հանդիսացավ բուրժուազիայի առաջադրած և էսեռա-մենշևիկյան կուսակցությունների կողմից եռանդուն պաշտպանություն գտած «1917 թ. ազատության փոխառության» նկատմամբ բոլշևիկ պատգամավորների վարքագիծը... Անողոքաբար դատապարտելով այն, բոլշևիկները դեմ քվեարկեցին ժողովրդի կենսական քաղաքական-տնտեսական շահերին դեմ գնացող այդ «ավազակային» փոխառությանը, որի նպատակն էր շարունակել իմպերիալիստական պատերազմը մինչև «հաղթական վախճան»։ Համագումարի պատգամավոր բոլշևիկ Մ. Ս. Կեդրովը հետագայում գրում էր. «Շերիֆխանեի մեր շրջանը ներկայացված էր (համագումարում—Հ. Մ.) ընդամենը 3 պատգամավորով (Կեդրով, Տարասով, Տետերնիկով), որոնք հիմնական հարցերում («ազատության փոխառություն», ժամանակավոր կառավարության նկատմամբ վստահություն և այլն) դեմ քվերարկեցին[36]։

Համագումարում հետաքրքիր և սուր դիսկուսիայի առիթ հանդիսացավ ժամանակի այնպիսի կարևորագույն հարցերի քննարկումը, ինչպիսիք էին պատերազմի ու խաղաղության, ագրարային, ազգային, բանվորական, բանակի նյութական-սանիտարական դրության և այլ հարցերը[37]։

Համագումարի նախավերջին նիստում, մայիսի 23-ին, լսվեց Ռ. Կորգանովի «Բանակային պրոֆեսիոնալ կազմակերպությունների մասին» զեկուցումը։ «Երկու ժամ» տևած այդ զեկուցումից պահպանվել է կցկտուր մի ինֆորմացիա, որից նույնպես երևում է, որ Կորգանովը սուր քննադատության է ենթարկում ռազմական մինիստրներ Գուչկովի և ապա Կերենսկու ապրիլ-մայիսյան հրամանները[38], հեղափոխությունից ծնված սովետների և բանակային կոմիտեների գործունեությունը կծկելու, զինվորական մասսաների հեղափոխական ստեղծագործությունը մեռցնելու, վերջին հաշվով հեղափոխական բանակի այդ օրգանները իմպերիալիստական բուրժուազիայի շահերին ծառայեցնելու հարցերում։ Արտահայտելով համագումարի մեծամասնության տրամադրությունները, Կորգանովը անողոք քննադատության էր ենթարկում Գուչկով-Կերենսկու հրամանները դիսցիպլինար դատարանների ստեղծման հարցում, այն որակում էր իբրև «խղճուկ լխառնածին» միջոցառում, որը գործի հակահեղափոխական էությունը սքողում էր այդ դատարանները «հեղափոխության ամրապնդման» ծառայեցնելու կեղծիքի, ահավոր խաբեության հետ։ Ժամանակավոր կառավարությունը ցանկանում էր «դիսցիպլինարս» այդ օրգանների միջոցով զսպել քայքայվող բանակի հեղափոխական ոգին, կանխել մասսայական դասալքումը, բանակը նախապատրաստել նոր հարձակման համար։ Կորգանովը քննադատում էր այդ օրգաններում ընտրությունների ոչ դեմոկրատիկ, կուրիալ սկզբունքը, ըստ որի սպաներին պետք է ընտրեին ոչ թե նաև զինվորները, այլ միայն իրենք՝ սպաները։ Այդ հանգամանքը դիսցիպլինար

---

35 Ս. Ն. Ս ե ֆ, նշված ժողովածուն, էջ 102։

36 «От Февраля к Октябрю», 1957, Մոսկվա, էջ 171։

37 Այդ հարցերի քննարկմանը մենք կանդրադառնանք մի այլ հոդվածում։

38 Տե՛ս «Революционное движение в России в апреле 1917 г. Апрельский кризис». Մոսկվա, 1958, փաստաթուղթ № 258, ինչպես նաև «Революционное движение в России в мае—июне 1917 г., Июнская демонстрация», Մոսկվա, 1959, փաստաթուղթ № 188։

դատարանները կդարձնեին զինվորական հեղափոխական մասսաների վերահսկողությունից դուրս կանգնած ռեակցիոն օրգաններ, մի բան, որը և ցանկանում էր ժամանակավոր կառավարությունը։ Կորգանովը «անհրաժեշտ է գտնում, որպեսզի զինվորական, բանվորական և գյուղացիական Սովետների Համառուսաստանյան համագումարի (նրա աշխատանքները պետք է սկսվեին Պետրոգրադում, հունիսի 1-ին—Հ. Մ.) պատգամավորները պաշտպանեն այն սկզբունքները, որոնք իրենցից ներկայացնում են զինվորների և սպաների կոլեկտիվ ստեղծագործության արդյունք, և որոնք արտահայտություն են գտել սեկցիայի զեկուցման մեջ»[39]։ Ուշագրավ է, որ վախենալով իրենց հեղինակության կորստից, համագումարի աջ գործիչները չեն համարձակվում առարկել Կորգանովի զեկուցման հիմնական դրույթներին և արդյունքը ստացվում է փայլուն։ Սեկցիայի մշակած կանոնադրության 35-րդ կետը ազդարարում էր, որ «վաշտերի և այլ կոմիտեների որոշումները պետերի սանկցիայի կարիքը չունեն»[40]։ Դրանով բացահայտորեն մերժվում էր Կերենսկու հրամանի 1.8-րդ, ամենառեակցիոն կետը։ Արձանագրություններում նշվում էր, որ «բոլոր վիճելի կետերը ընդունվեցին զեկուցման ոգով և մի շարք բաժիններում չեն համընկնում Գուչկովի և Կերենսկու հրամանների հետ»[41]։

Իրադարձությունների զարգացմամբ և բոլշևիկյան ագիտացիայի նկատելի ազդեցությամբ դեպի ձախ թեքված համագումարը մերժում էր ոչ միայն օկտյաբրիստ Գուչկովին, այլ նաև նոր միայն ռազմական մինիստր հռչակված «սոցիալիստ» Կերենսկուն, չնայած վերջինիս սին հեղինակությանը զինվորական լայն շրջաններում։ Այդ նշանակում էր, որ հեղափոխության բախտով իսկապես մտահոգված ուժերի համար արդեն կարևոր էին դառնում ոչ թե կուռքերը, այլ գործը։

Համագումարում առավել սուր տարաձայնությունների տեղիք տվեցին Կովկասյան բանակի Երկրային սովետի կազմի ընտրությունները, որին նվիրված էր համագումարի վերջին, մայիսի 24-ի նիստը։

Հակասությունները ընթանում էին մի կողմից բոլշևիկների և ողջ համաձայնողական բլոկի միջև, և մյուս կողմից՝ էսեռների ու մենշևիկների միջև։ Ելնելով այն փաստից, որ բոլշևիկների ու մենշևիկների միջև «գոյություն ունեն լուրջ տարաձայնություններ հիմնական տակտիկայի հարցի շուրջը»[42], բոլշևիկները պահանջում էին ս.-դ. ֆրակցիայի երկու տեղերը հատկացնել բոլշևիկներին։ Նրանք հույս ունեին, որ սովետի կազմում կընտրվեն նաև զորամասերի ներկայացուցիչները։ Մենշևիկները և աջ բլոկը մերժեցին բոլշևիկների այդ պահանջը։ Բլոկի անունից բոլշևիկների դեմ հանդես եկած մի պատգամավոր՝ մենշևիկ Լեվերտովը ուղղակի հայտարարեց. «Ես հենց ցանկանում եմ ասել, որ մարդիկ, ովքեր հետապնդում են մեր տակտիկան, տեղ չունեն մեր Երկրային կենտրոնում»[43]։ Չնայած բոլշևիկների առաջարկը մերժվում է, սակայն պայքարի պրոցեսում նրանք ձեռք են բերում ավելի ու ավելի շատ կողմնակիցներ և առայժմ դեռ պասիվ համակրողներ։ Պատգամավորներից 20 հոգի, հավանաբար բոլորն էլ բոլշևիկներ, դեմ են քվեարկում բլոկի առաջարկած ցուցակին, իսկ 147-ը ձեռնպահ են մնում[44]։ Այս նշանակում էր, որ համագումարում ծավալված պայքարը բոլշևիկների համար իզուր չէր անցել։

Բոլշևիկներին զրկելով ֆրակցիոն տեղերից, համաձայնողական բլոկին չհաջողվեց նրանց ընդհանրապես զրկել Երկրային սովետում տեղ ունենալուց։ Զորամասերից սովետի կազմում ընտրված բոլշևիկների թվում էին Թիֆլիսի կայազորից Վ. Պ. Մուշնիկովը և Ա. Գ. Կայդալովը[45]։

Էսեռների և մենշևիկների միջև պայքարը սրվեց Երկրային սովետի նախագահության ընտրությունների ժամանակ, մասնավորապես նախագահի ընտրության հարցում։ Մենշևիկները հավակնություն ունեին այդ պոստում կարգել Ե. Գեգեչկորուն։ Սակայն այդ բանը նրանց չհաջողվեց։ Էսեռների ներկայացուցիչ Դոնսկոյը ավելի շատ ձայներ ստացավ և դարձավ Կովկասյան բանակի Երկրային սովետի նախագահ։ Դասակարգային բովանդակության տեսակետից այդ երկու գործիչների միջև ոչ մի էական տարբերություն չկար։ Երկուսն էլ լինելու էին բուրժուական ժամանակավոր կառավարության «սոցիալիստ» գործակալները Կովկասյան բանակում։ Հարցը վերաբերում էր միայն հեգեմոնիային, իրենց հետագա նպատակների իրագործման հա-

39 Վրացական ՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 21, ց. 2, գ. 10, թ. 93։
40 Նույն տեղում։
41 Նույն տեղում։
42 Ս. Ե. Ս ե ֆ, նշված ժողովածուն, էջ 115։
43 Նույն տեղում, էջ 116։
44 Նույն տեղում, էջ 117։
45 «Կովկազսկի ռաբոչի», № 104, 20 հուլիսի 1917 թ.։

մար բանակում ազդեցություն ունենալուն։ Էսեռները մեծամասնություն են ստանում ընդհանրապես սովետի «կոալիցիոն նախագահությունում» և տևական ժամանակով ապահովում են իրենց ղեկավար դերը բանակում, մինչև որ հեղափոխության առաջընթացը կհեղինակազրկեր հակահեղափոխության հետ գրկախառնված համաձայնողական կուսակցություններին։ Այդ մթնոլորտում էլ հասունացավ Կովկասյան բանակի երկրորդ համագումարի հրավիրման հարցը։ Նրանում, 1917 թ. դեկտեմբերին, բոլշևիկները մեծամասնություն նվաճեցին։

Այսպիսով, չնայած բանակային առաջին համագումարում համաձայնողական բլոկի ունեցած բացահայտ գերակշռություններ, մի բան, որը արտացոլում էր հեղափոխության զարգացման տվյալ էտապում զինվորական մասսաների «բարեխղճորեն մոլորվածությունը», նրանց «հեղափոխական պաշտպանողականությունը», բոլշևիկները իրենց «խիզախ», «հանդուգն» պայքարով պարզեցին գիտական, պրոլետարական սոցիալիզմի արմատական տարբերությունները կեղծ, մանրբուրժուական սոցիալիզմից։ Պրոպագանդելով բոլշևիզմը, նրանք նպաստեցին հեղափոխական դեմոկրատիայի ներսում դասակարգային հարաբերությունների բյուրեղացմանը, գրասենով իսկ նպաստելով Կովկասյան բանակի աստիճանական բոլշևիկացման պրոցեսին։ Դրանում էլ պետք է տեսնել երկրամասի կյանքում բանակային առաջին համագումարի և նրանում բոլշևիկյան ֆրակցիայի գործունեության նշանակությունը։

Г. С. МЕЛИКЯН

ДЕЯТЕЛЬНОСТЬ БОЛЬШЕВИКОВ НА ПЕРВОМ СЪЕЗДЕ КАВКАЗСКОЙ АРМИИ

Резюме

Первый съезд Кавказской армии явился одним из важных событий в Закавказье в период подготовки Октябрьской Социалистической революции. До последнего времени этот съезд и, в частности, деятельность большевиков на съезде, не являлся предметом научного исследования.

На съезде был рассмотрен ряд важных вопросов, касающихся, в частности, соотношений различных партий, их программ и тактики, после свержения самодержавия.

Маленькая, но боевая группа армейских большевиков (Г. Н. Корганов, И. В. Малыгин, С. И. Кавтарадзе, М. С. Кедров, Н. М. Кузнецов, Г. Осепян, С. А. Богданов и др., более 20 делегатов) вела борьбу против соглашательского блока эсеров, меньшевиков, буржуазных националистов, разоблачала позицию этого блока, противопоставляя ему революционную программу и тактику большевистской партии по всем коренным вопросам современности.

Надо отметить, что в деятельности большевиков проявлялись отдельные недостатки, которые можно объяснить их все еще недостаточной теоретической и практической закалкой, а также особенностями борьбы в Закавказье.

Автор обсуждает следующие вопросы, связанные с работой съезда: подготовка и созыв съезда, текущий момент, отношение к буржуазному Временному правительству, к «займу свободы 1917 года», о профессиональных организациях армии, о выборах в Краевой Совет Кавказской армии, о месте и значении съезда в революционно-демократическом движении на Кавказе и т. д.